

Տ. ՏԱՐՈՆ ԵՊՍ. ՃԵՐԵՃՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐԱԿԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Օգոստոսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պարվի շքանշան հանձնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Տարոն եպս. Ճերեճյանին՝ ի գնահատումն Սրբազան Հոր ազնիվ ու բազմամյա հոգևոր ծառայության:

Պարգևատրման առիթը Տարոն Սրբազանի ձեռնադրության 40-ամյակն էր:

«Անավասիկ, քառասուն փարիներ Դուք քաջ և բարի հովվի հանձնառությամբ քահանայագործում եք մեր Եկեղեցու լուսավոր անդամներում՝ Ձեր ծառայությունը բերելով Սփյուռքում բնակություն հաստատված մեր ժողովրդի զավակներին: Ձեր պաշտոնավարության բոլոր վայրերում՝ Դամասկոսի և Հունաստանի հայոց թեմերում, ինչպես նաև Ֆրանսիայում Դուք հոգու և մտքի Ձեր կարողությունները անձնվիրաբար ի սպաս եք դրել «Կենսաց խոսքը» հայորոյաց հոգիներում սերմանելու սրբազան առաքելությանը՝ միշտ հեփամուր, որ օրավուր գորանա Ձեր հոգևոր խնամքին հանձնված հայորոյաց հավատարև առ Աստված և սերը առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Ձեր քաջալերանքով և Ձեր նախաձեռնությամբ, որպես Հայրապետական Պարվիրակի Փոխանորդ Հարավային Ֆրանսիայի, հիմնվել են եկեղեցիներ ու կրթական հաստատություններ, իրագործվել են եկեղեցաշեն ու ազգանվեր ծրագրեր՝ միավորված հայ համայնքների գործացմանը և հայորդիների հոգևոր կյանքի նորոգությանը»,- ասված է Հայրապետական սրբապատ կոնդակում, որն ընթերցեց Արարարյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Շքանշանի հաձնման հանդիսավոր արարողությանը մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրեր:

Այսուհետ Սրբազան Հայրն, իր իսկ ցանկությամբ, անցնում է վաստակած հանգստի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Երևանի Սուրբ Եզրիկի վանքի վարժապետ Գրիգոր Բարսեղյանը (մեջ) և Սուրբ Եզրիկի վանքի վարժապետ Գրիգոր Բարսեղյանը (աջ) հարգանքներ արտահայտում են Սուրբ Եզրիկի վանքի վարժապետ Գրիգոր Բարսեղյանին (ձախ)։

